

ամէն գիշեր եղանք քարայրը. որսի հրացանը, բացառիկ շնորհ, եղած անոր հօրը՝ գեղապետին, տղու պէս ուրախ յեղափոխական Մաթիկը կը գործածէր նշանակալից ձախաւերութիւնով մը: Բայց խորունկ էին իր հրահանգները մոսխին ձեռնումին մասին: Ու մասնագէտ էր ուումը արձակելու մէջ, անշուշտ կլորակ քարերու ձեւին տակ, հիմա՝ որ «պահեստ»ը կը գտնուէր շատ հեռու: Մինչեւ յիսուն՝ անիկա էր յոգներ օխանոց կլոր քարերը նետելու, իբր վարժ գինուոր: Բայց նիւթական, իր բառովը՝ փորձ-նակաւն այս ընդհատները անիկա կը դարմանէր տեսական աւելի ներուժ փաստարկութիւններով, որոնք յեղափոխական աշխարհահայեացքը կը նկրտէին ընդհանրացնել «մասսաներու խուլ խղճմտանքներում»: Անգամ մը պատուէ՛ր այդ մութը, յեղափոխական սուրբ գործը կարելի էր համարել փրկուած: Հիմա՝ մատի վրայ, այն ատեն՝ հազարներ պիտի ըլլային գիտակից գինուորները: Մեր գլուխը ժամերով պատրաստ եղաւ դիմանալ այս իրական քարկոծումին, ա՛յնքան՝ որ դարձաւ իր կարգին «մի հնոց յեղափոխական սուրբ գաղափարի»: Անհուն էր անկապակցութիւնը այս յեղումներուն մէջ ու կարելի չէ իր խօսքերը տալ հոս իր ձեւովը: Մնաց որ, մեծ մասը այդ սուրբ գաղափարներուն, այսօր դադրած են իրենց սրբութենէն ու թանգարանցու ապրանք կը հոսին:

Բայց այդ դժբախտութենէն զերծ է, գոնէ իմ մտքին մէջ, իր դէմքը, որ չէ կորսնցուցած սիրուն, աշխոյժ, իմաստուն իր գեղեցկութիւնը, երբ մեծկակ բոցի մը լուսուն՝ կը կարմրէր, կ'աննիւթանար, քարայրի օճախին առջին ու «գաղափարով՝ լուսապսակ» կը մեծնար իր դիւրաբեկ իմաստէն: Զերբակալումէն յետոյ, տանջանքի տակ իր արիութիւնը, ոչ մէկ անուն թուրքին չյանձնելու իր յամառութիւնը, մահուան մէջ մտնելէն ետքն ալ իր յոյսը անմեռ պահելու իսկապէս յեղափոխական շնորհը, տարիներու խաւէն կ'անջատուին հիմա ու զիս կը մղեն տալու անոր դիմագծութիւնը, կենդանագիրը, իբր հատընտիր նմոյշ սերունդէ մը, որուն բարոյական շէնքը անծա-